ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№35-Ա «08» 02 2022 թ. ք.Երևան

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 397-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի N 30-L հրամանի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Պետական գույքի կառավարման կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաշխման սխեմատիկ կառուցվածքը հաստատելու և պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 2020 թվականի մայիսի 27-ի N 61-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 397-Ա հրամանը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

23 դեկտեմբեր 2021թ. № 397 -Ա

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՍԽԵՄԱՏԻԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի N 30-L հրամանի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Պետական գույքի կառավարման կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաշխման սխեմատիկ կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

2. Պետական գույքի տնօրինման վարչության, պայմանագրերի կնքման և պայմանագրային պարտավորությունների հսկողության, իրավական ապահովման և դատական ներկայացուցչության բաժինների գործունեության, Պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայության «Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման համակարգումը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Բաբայանին:

3. Պետական բաժնեմասի կառավարման, պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչությունների գործունեության, Պետական գույքի կառավարման կոմիտեի ենթակայության «Կ.Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ սահմանված գործառույթների իրականացման համակարգումը, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման գործընթացը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալին:

4. Հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության, քարտուղարության, անձնակազմի կառավարման և առաջին բաժինների գործունեության համակարգումը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի գլխավոր քարտուղար Մարո Մարգարյանին:

Հավելված
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2022 թվականի ---------- «------»-ի
N ----Ա հրամանի

«Հավելված
Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2022 թվականի դեկտեմբերի «23»-ի
N 397-Ա հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



»:

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ